2024թ. գերմաներենի օլիմպիադայի մարզային փուլի
առաջադրանքների գնահատման չափանիշներ
11-12-րդ դասարաններ

N	Առաջադրանքը	Միավորը	Ընդամենը
1	Տրված բառերով լրացնել տեքստի բացատները: Տեղադրել բառերը համապատասխան քերականական ձևով:	10 բառ, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,3 միավոր	3
2	Ընտրել ճիշտ տարբերակը:	5 առաջադրանք, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,5 միավոր	2,5
3	Գտնել և տեղադրել ճիշտ շաղկապը:	5 նախադասություն, յուրաքանչյուր ճիշտ նախադասությունը՝ 0,5 միավոր	2,5
4	Գրել նախադասությունները համապատասխան ձևով:	5 նախադասություն, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,6 միավոր	3
5	Կարդալ տեքստը և տեքստի բովանդակությանը համապատասխան լուծել առաջադրանքները:	8 առաջադրանք, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0,5 միավոր	4
6	Գրել կարճ նամակ՝ տրված կետերով: Նվազագույնը՝ 60 բառ:	Գնահատման չափանիշները տե՛ս ստորև:	5
			20

Գրավոր աշխատանքի ստուգման չափանիշներ

Բովանդակություն

- Տեքստի բովանդակությունը միանգամայն համապատասխանում է ներկայացված պահանջին – 5
- Տեքստի բովանդակությունը հիմնականում համապատասխանում է ներկայացված պահանջին - 4
- Խախտված է թեմայի զարգացման տրամաբանությունը – 3
- Բովանդակությունը մասամբ է համապատասխանում պահանջին – 2
- Տեքստը շատ թերի է և հիմնական կետերին անդրադարձ չի արվել - 1
- Բովանդակությունը չի համապատասխանում պահանջին - 0

Լեզու

- բառիմաստի սխալ կիրառման համար հանվում է 0.3 միավոր
- քերականական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0.2 միավոր
- ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0.1 միավոր

Անհրաժեշտ բառերի քանակը չպահպանելու դեպքում հանվում է՝

- մինչև 5 բառ պակաս – 0.2
- մինչև 10 բառ պակաս - 0.5
- մինչև 15 բառ պակաս - 1
- մինչև 20 բառ պակաս -1.5
- 20-ից ավելի բառ պակաս լինելու դեպքում աշխատանքը չի գնահատվում